

ԲԱԺԱՆՈՐՈՒ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Տոշկայի համար 10 Պր.  
 Տարեկան 5 »  
 Բրատսկայի համար 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 ԿԱՆԻՍԻԿ ՎՆՆՆԻՍԻ  
 —)(—  
 Գրութեան և շին տրու  
 —)(—  
 Երանցումն տղր 20 Ժան-  
 քին և Երեմիակ աւելի ան-  
 զանկերու համար 20 ժո  
 գեղի կրթւոյ :

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊՍԱՍՆԱՆԱՏՈՒ Բ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Նախկ և քրտն դրկել  
 Խմրագրութեան հասցիին  
 —  
 Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

### ԱՆՕԹԻ ԵՆ...

Ամբողջ մարդկային ազգի պատմութեան մէջ նմանը չի տեսնուած վայրագ և ահարկու կոտորած է մը վերջ, անօթութեան անագորոյն ճիւղին էր որ սաք գրու հայաստանի գրգռուող հոգիին վրայ :

Մտա երկու երեք տարի է, որ շարունակ կը կարգանք ու կը լսենք թէ Հայաստանի մէջ սով կայ, անօթութիւն և մահ կայ :

Սակայն մեզ համար ցաւէ աւելի ապշուածիւն պատճառող տըլուր երեւոյթը սա է թէ, այլևս այդ տեսակ գրուածները «չորի ձայն» են հայուն համար : Այլևս անօթութեան նուազած թշուառ հայաստանցիին մարած ձայնը անգոր է նոյն իսկ իր հարազատին, իր եղբոր սիրաբ խոցելու :

Գիտէինք թէ մարդը կարող է վարժուիլ, համակերպիլ ամէն բանի, բայց գիտէինք նաև թէ կան այնպիսի բաներ ալ, որոնց երբէք չպիտի համակերպէր մարդը, ճշմարիտ մարդը :

Սակայն դժբաղդարար մեր անտարբերութիւնը, կամ աւելի ճիշտը, մեր անզգայութիւնը այնչափ առաջ գնաց որ, այլևս սովորական, կարեւորութեան չուրկ զէպքերու պէս կիմանանք թէ հայաստանցիին անօթի է, թէ չունի կտոր մը հաց ուտելու :

Երբ կրօնամուլ, ծախսած և անխիղճ օտար կղերք իր կարթերը կը ձգէ ալեկոծ Հայաստանի պղտոր ծովուն մէջ, անօթի մարդիկ, յուսահատ հոգիներ որսալու համար, մենք կը յուզուինք ու կը զղուինք, վասնզի շատ ստոր, շատ հակամարդկային է ստիկա :

Սակայն բնաւ պէտք չէ մոռնանք թէ աւելի ստոր, աւելի զղուելի կը գառնայ մեր գերը, երբ թոյլ կուտանք որ մեր հայրենակից, արենակից եղբայրները մատնուին այնպիսի անաւելի վիճակի մը որ, ստիպուած ըլլան իրենց հնաւանդ, դարաւոր համազումն ու հատաքը ծախել պատառ մը շոր հացի համար :

Ահա՛ թէ ինչո՞ւ անցեալ տարի «Նարժում» կոչ ըրաւ պոլիտրաբնակ և ուսմանարնակ բոլոր հայութեան ազգասիրական, մարդասիրական զգացումներուն : Ահա՛ թէ ինչո՞ւ ան ջանաց միջոց մը հայթայթել պատառ մը հաց, ուսուց մը շոր տալու բաղաճարչար Հայաստանցիներուն գոնէ մէկ փոքրիկ մասին, պէթ մեղմելու համար անոր քաղցը, անոր պապակը :

Սակայն այդ հանգանակութիւնը, որ աւելց մարտէն մինչև սեպտեմբ. վեց երկար ամիսներ, շատ չնչին արդիւնք ունեցաւ, հաղի 354 Քր.ի գումար մը :

Իսկ մեզ համար ամենէն աւելի ցաւ պատճառող միայն այդ կէտար չէր : Քննեցէ՛ք հանգանակութեան բոլոր ցուցակները և հոն պիտի գտնէք ուսանողներու, մանուկներու, հայ և օտարազգի աշխատուորներու անուններ միայն, անոնց լուսանբեր միայն :

Իսկ ո՞ր է ձերինը, հայ շուշեր և հարուստներ, ո՞ր է ձեր սոկին և տրծաթը :

Եթէ դուք այս անգամ ալ վըստահութիւն չունէիք այս ինչ թերթին կամ այն ինչ խումբին վրայ, դուք, պարոններ, դուք ձեռնէ, ձեր մէջէն ինչո՞ւ չընտրեցիք յանձնաժողովներ, չի զըրկեցիք ձեր սոկին ու զղակի ազգին պետին, Պատրիարքին :

Երբ մոլեռանդ, հրէշ թիւրքերը՝ վայրենի գայլ ու գաղաններու նման Հայաստանցի կոյսերու և մանուկներու վրայ կը խոյանային անոնց սիրան ու փորը բզբտելու համար, դուք կը յուզուէիք և կուլայիք, ձեր մազերը կը փետտէիք, վասն զի կարող չէիք, հնար չունէիք անոնց օղներու (°) :

Հիմա Հայաստանի մէջ կոտորածներ չի կան : Անոնք գոնէ առերեւոյթն գաղթած են : Սակայն հիմա կոտորածներու չափ ահաւոր ուրիշ բան մը կայ, կը լսէ՞ք, անօթութիւն կայ, սո՞վ կայ :

Եթէ չէիք կրնար կուտիլ բըռնակալի մը գէմ, բռնակալներու գէմ, ջանացէ՛ք գոնէ, ձեր ու-

ժերը հաւաքեցէ՛ք կուտելու համար անօթութեան գէմ : Հիմա ո՞չ հրացանի պէտք ունիք և ո՞չ թիղանօթի :

Եթէ շատ կը վախնաք պայթուցիք ու մըրին աւերիչ յատկութիւններէն, շատ կատէք վառողը, գոնէ չբաւորին դրամ տրէ՛ք, դուք որ ա՞յնքան կը սիրէք դրամը :

Եթէ յիշափոխական գործերու մէջ «չեղբք» էք և եթէ երդում ըրած էք «կուտ» մը անգամ չիտալ մինչև որ ազգին գործերը ազգին «չոջ» երուն չի յանձնուին, գոնէ, Աստուծոյ սիրուն, անօթիին հաց չի տալու համար ալ նորանոր պատրուակներ մի՛ ստեղծէք. գոնէ անզգայ մի՛ մնաք քաղցածներու սրտամորմոք ազգակներուն առջեւ :

Գիտցէ՛ք որ բռնաւորի մը, վայրենիի մը երկսայրի սուրին տակ արիւնշաղախ մեռնելէն շատ աւելի անպատիւ, շատ աւելի վատ բան է անօթութեան մահահատ ճանկերուն մէջ նուազած մեռնիլը : Գիտցէ՛ք նոյնպէս թէ «չի կրնալ ու չօգնել» աւելի ցած, աւելի ստոր բան է «կրնալ ու չօգնելը» :

Տեսէ՛ք, ամբողջ Հայաստանի մէջ սրտածմրկի տեսարան մը պարզուած է : Անօթութեան տըրիւնուշա, ամեհի ճիրաններուն մէջ գալարուող, չուտելու և չի խմելու դատապարտուած թըշուառներու մահմտան տեսարանն է այն :

Լսեցէ՛ք. ողբողառ նահատակ Հայաստանցիներուն աղի խարշ կոչերը, անոնց հեծիւնները լսեցէք. նուազելու վրայ են անոնք : Հետզհետէ տարածուելու վրայ է Հայաստանի արիւնաներկ սարերուն վրայ մահտան սեւ ստուերը :

Յուրտ անզգայութիւնը, քրտմընելի լուսթիւնը հեաղհետէ սկսած է պատել մորթուած և սովատանջ հայաստանցիներու գերեզմանները :

Շուտ բրէ՛ք, շտապեցէ՛ք, գեռ ժամանակ կայ, ձեր նուազած եղբայրներուն օգնութեան հասէ՛ք, անոնք քաղցած են, անօթի են...

ՏԻԳՐԱՆ ԱՃԷՄԵԱՆ

### ԷՍԻԼ ԼՈՒՊԷ

ԿԵՆՍՍՊՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փրանսայի Հանրապետութեան նոր նախագահը ծնած է 1838 դեկտ. 31ին, Մօնթէլիմոն նահանգին Մարսան քաղաքին մէջ : Իր իրաւագիտական ուսմանց շրջանը աւարտելէն ետք, նոյն նահանգին կառավարիչը կը ըլլայ, յետոյ առաջին անգամ իր նահանգին երեսփոխան կը նտրուի 1878 թուականին :

Լուպէ, խորհրդարանին մէջ ձախակողմեան ակուններուն վրայ նստաւ : Նշանաւոր հանդիսացաւ դատաստանական բարենորոգմանց ծրագրին վիճաբանութեան առեւն, Եկեղեցւոյն ու կառավարութեան բաժանումին գէմ քուէարկեց և ձախակողմեան հանրապետականներու նախագահ ընտրուեցաւ :

1885 ին Մերակուտական ընտրուեցաւ և ձախակողմի չափաւորականներուն կողմը բռնեց : 1887 ին հանրային շինութեանց նախարար կարգուեցաւ, Թիրաբի դահլիճին մէջ : 1892ին Գառնիո իրեն յանձնեց նախարարութիւն մը կազմելու հոգը : Այս դահլիճին օրով տեղի ունեցաւ հանրապետութեան հաստատման հարիւրամեակին տօնախմբութիւնը, Քարմօի հանքագործներու գործադուլը, Բանամայի ինգրին ծագումը :

Լուպէ, որ միշտ կը փափաքէր քաջուիլ ապարէզէն, նոյն տարւոյ նոյեմբերին հրաժարեցաւ : Յետոյ Ռիպօի դահլիճին մէջ ներքին գործոց նախարար եղաւ : Եւրմեյ-Լաբուրի մահտանէն ետքը, Լուպէ յաջորդեց իր Թերակոյտի նախագահ :

ՆԵՐՔԻՆ ՄԱՐԻԸ

Խաղաղ ու համեստ անձ մըն է Լուպէ. իր կեանքը ոչ մէկ յուզում ունեցած է, իր գործը ոչ մէկ կուի : Հաշտութեան, համերաշխութեան, համաձայնութեան մարդը եղած է ան : Հակառակ խորհրդարանական նխտերու մէջ անցուցած երկար ժամն.

րուն, հակառակ յաճախ գրաւած շատ բարձր դիրքերուն, անծանօթ մնացած է այսօր Պրանսայի մէջ, միշտ հեռու փախելով փառքի ու պատուի ծանր բռնակալութենէն:

Առանց անհատական կարեւոր հարստութիւն մը ունենալու, առանց կաշառակերութեան ամենադոյզն կասկածանքի տեղի տրւած ըլլալու, փոքրիկ շէնքի մը մէջ կայրէր մեկուսացած, իր ընտանիքին հետ: Եթէ իր ընտրութեան օրը, մէկ քանի խումբեր, իր ետեւէն «Բանամա» կը պօռային, այդ գործին մէջ ու է զեղծում կամ դրամական խարճախութիւն ըրած ըլլալուն համար չէր: այլ, որովհետեւ Գառնօյի թելադրութեամբ անշուշտ, գործակցած էր այն գայթակղութեանց խեղճութիւն, ուր Պրանսան, Հանրապետութիւնը եւ իր անձնական բարեկամները կը վերտանգուէին: Անիկայ գիտցած է, ընդհակառակը, զրկուիլ իր անձնական փառքէն, իր մեծութենէն եւ պահել իր խղճին ազատութիւնը: Ճիշտ հակապակերը իր նախորդին, Լուպէ փառքերու եւ տիրոջներու յիմարը չէ. անիկա պիտի ծառայէ իր երկրին, կրցածին չափ լաւ:

Պրանսայի արդի ահարկու տաղանային մէջ, հանճարի մը պէտք չիկայ երկիրը փրկելու համար: Պարզ արդարաւորութիւն մը ու անկեղծութիւն մը կը բաւէ վերջ տալու համար ամենուն: Եւ Լուպէ այն մարդն է, որ ամենէն աւելի յարմար է այդ գործին: Ինք Տրէյֆիւսի եւ անոր շուրջը դարձած խեղճիներուն ու անձերուն հետ ու է է կայ չէ ունեցած, որով իր ձայնը, իբր անկողմնակալ ձայն մը, պիտի կարողանայ բոլոր անձնական հա-

կառավարութիւնները չեզոքացնել: «Ինչ Լուպէ խուլ մնայ, կը գրէ Գեյլմանսօ. կաթոլիկ եկեղեցւոյ խռովարարներուն անզօր սպառնալիքներուն առջեւ, թո՛ղ ունենան ձայնին, եւ երեկոտն մոռցրած պղտիկ քաղքենին պիտի ցուցնէ թէ Պրանսական հանրապետութիւնը, իր վտանգաւոր ժամբուն, կրնայ հայրենիքի հողէն արտագրել թագաւորներէն աւելի հազուագիւտ, նախագահներէ աւելի լաւագոյն բան մը—մարդ մը»:

### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարիկ, 12 Փետր.

Հանրային տրիան ճախագահ Թիլիս-Պոնի մահը. — Կորնիսիոս ճախագահ Է. Լուպէ. — Բեռնարտան ասեն ցոյցեր Բարիկի փողոցներուն մէջ. — Յուդաիկաւորութիւն Թիլիս-Պոնի. — Կորնիսիոսի անցքը Պ. Սկասարեանի. — Իրիկոսան ցոյցեր. — Բարիկի Մայր Եկեղեցին. — Ջուարնայի դէպք մը Բարիկի հայ կիսակին:

Ս. մտոյս 4ին հինգշաբթի օր Պէլիքս Պոն Պրանսայի հանրապետութեան նախկին նախագահը յանկարծամահ եղաւ: Մարմինը, նախարարական որոշումի մը համաձայն, ութ օր էլիզիէ պալատին մէջ ժողովրդեան ի ցոյց գրուելէ ետք, երեկ, 11 փետր. հինգշաբթի օր թաղուեցաւ մեծ հանդէսներով:

Նոր նախագահ ընտրուած էր Էմիլ Լուպէ, որուն ընտրութեան դէմ ոչին օրը Բարիկի փողոցներուն մէջ ժողովրդական ցոյցեր եղան, «անկցի» Լուպէ, անկցի» Հանրապետութիւնը» աղաղակելով: Փողոցները ամէն կողմ Պէլիքս Պոնի եւ Բրէնս Վիքթոր

նաբուլճօնի եւ ուրիշ անձերու պատկերները թափուած էին:

Աւելի քան երեք ժամ տեւեց ամբոխին աղաղակն ու իրարանցումը, որոնք կը կատարուէին մասնաորակաւ լրագրողներու խմբագրատուններուն եւ կառավարական պաշտօնատանց առջեւ: Բայց ստիկանութիւնը, իր յատուկ ուշիմութեան եւ աշտըլութեան շնորհիւ, յաջողեցաւ ամէն անկարգութեանց առաջքն առնել:

Ժամը 10ին կը սկսէր Պէլիքս Պոնի յուղարկուելու թեան հանդէսը: Պէտք է գիտնալ որ ֆրանսական հանրապետութեան նախագահին ամենամեծ օրը իր թաղման կամ յուղարկուելու թեան հանդէսին օրն է, քանի որ ոչ ճննդեան եւ ոչ գահակալութեան տոնախմբութիւն ունի, եւ ընդհակառակը, շատ անգամ այդ օրերուն կանարգութիւն փոխանակ փառաբանուելու:

Պէլիքս Պոն օր ժողովրդին հասարակ դասակարգէն առաջացած, կաշկարոյց-դորձաւոր մըն էր եղած, անշուշտ մաքէն իսկ չէր կրնար անցնել թէ՛ օր մը ֆրանսական հանրապետութեան նախագահ պիտի ընտրուի, կայսրերու հետ պիտի տեսակցի, վեհապետներու հաւասար փառքով պիտի յարգուի եւ աղաչին յուղարկուելու թեան մը պիտի արժանանայ:

Թէեւ նախկին գուրս, բայց անկողմնաբար չէ կարծեմ ըսել որ, Պէլիքս Պոն հասարակ ժողովրդի զաւակ ըլլալով, մտան ծանօթ էր ամէն աղքատ մէջ գտնուող այդ անժառանգ դասակարգին ցաւերուն եւ այն զրկանքներուն, որոնց բռնակալներու ձեռքով կենթարկուին: Ինք իբրեւ գործաւոր մտան ճանչցած էր հա-

րուտ դասակարգին, խեղճ բանւորներուն վրայ ի գործ դրած վայրագ ճնշումները, եւ կրնար օգտակար դառնալ անոնց ու անոնք ի տեսնել տառապանքները: Բայց Պէլիքս անգութ մը ու անխառն մը եղաւ, անգութ եղաւ մանաւանդ անով որ օրացաւ իր անցեալի վիճակիցներն ու բառ մը իսկ չարտասանեց այդ եղկելիներու դէմ կատարուած բռնութեանց ու ռճիրներու հանդէպ: Ու կրնանք վստահ ըլլալ որ իր ձեռքէն եկածը չի լրացաւ անոնց ցաւերը ալ աւելի ծանրացնելու համար...:

Բուղարկուելու թեան շատ չըքեղ եղաւ. Բարիկի բոլոր գլխաւոր փողոցները խռնուած էր ժողովրդի խուռն բազմութիւն մը: Խուռնութեամբ պատուհաններն ու կտուրները հանդիսատեսներով լեցուած էին, ուր ժամուան մը համար մէկ մարդուն տեղը կարժէր 2-10 ֆրանք: Փողոցներուն լայն տեղերը աշտարակներ կանգնեցուցած էին, կառքեր կը սպասէին, կէսէն մինչեւ 5 ֆր. վարձքով, տեղին բարձրութեան համեմատ:

Հեծեալ զօրքերու բանակ մը յուղարկուելու թեան կառաջնորդէր, սոյն նշան ունենալով ծոճարակներէն կախուած երկայն սեւ մազեր, որոնք պղնձէ զրահին եւ սաղաւարտին զարդ մը կը դառնային քան սոյն կապ:

Հեծեալ զօրքաց կը հետեւէր հետեւակներու բանակը, սեւ փետուրներ ունենալով զլիարկներուն վրայ, ուրկէ ետքը կուգար պրակներու տանըմէկ խոշոր կառքեր, յետոյ վեհապետներու պատկերները, ներկայացուցիչներու կողմէն բերուած, եւ որոնցմէ ետքը Պէլիքս Պոնի զաղաղը: Նորընտիր նախագահն ու նա-

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՅՈՅՁԵՐ (\*)

Ա.

Անշանաւոր ժողովուրդն օրուան մը իրիկունն էր:

Ձիւնը արդէն պսակած էր լեռներու գագաթները, որոնց ստորտանն հովիտներ իրենց հօտերը դէպի ձոր կուղղէին: Այդ ձիւնապատ գագաթներէն վեր, թափանցիկ, կապտագեղ երկինքին վրայ աստղերը կը փալկէին:

Գեղեակին դարտափներուն վրայ, ուր կը խամբէին անորոյր վերջին վարդերն աշնան, մինչդեռ մեղմահոտ գետակը կը կարկաչէր դէպի ձորը իր ընթացքին մէջ, մեծ երգչուհին, կրկնոցին մէջ ամփոփուած, ինծի կը յայտնէր այն ասեն իր միակ սէրը:

— Այո, ես ալ սիրած եմ, եւ մարդու մը միակ յիշատակէն, որուն եւ ոչ իսկ անունը գիտեմ եւ որուն հետ

(\*) Իւմանիթէ նու վէլ հանդէսէն թարգմանուած:

անգամ մը միայն խօսած եմ, դիւ կը սարսափամ:

Այո, ես խորապէս յուզուեցայ այս յիշատակէն, սասնը հինգ տարիներ անցնելէ ետք...:

Ո՛հ, եթէ կարենայի ձեզի նկարել այս մարդը, այնպէս ինչպէս ասաց զայն առաջին անգամ, Միւնիխի անպիտան պարտէզին դրան առջեւ:

Բարձր էր հասակը, երիտասարդ, եւ իր գէմքը կը նմանէր Փլորէնտացի Մուրր Գեյրգին. իր կերպարանքը չեմ գիտեր ինչ արտայայտութիւն մը ունէր, միանգամայն զեղեցիկ, հիստ ու սխալալ, նաեւ դառնապէս տխրալից: Գիմազներու այս արտայայտութիւնը Վատիկանի մէջ տեսած էի եւ եւ կրկին զանոնք գտայ Բեթերսպոլիկի միանաստանին մէջ:

Անզրկացի Միսրը այս մարդը զիտաւու համար, իրենց շքեղ կառքերէն դուրս կը ձեռնի եւ Միւնիխի կրկնորդ ուրախ գուարթ խօսակցելով կանգ կ'առնէին յանկարծ:

Բայց ան լուկ զիս կը տեսնէր եւ պարտէզին դրան առջեւ կարծես քարացած կը մնար, աչքերը տեսելութեամբ լի:

Ես ալ սարսափէս կը գողայի, երբ

վանդակագործը կիսովին բանալով, զայն կը նշմարէի հոն, այնքան հըսկայ իր անշարժութեան մէջ, իր կապտագեղ աչքերը վրաս յառած:

Եւ երբ իմ սովորական նստարանին վրայ բազմած ըլլայի, սկսածայ ակնարկս կը ձգէի ամբողջ ժամեր գիտելու այդ գէմքը զոր զայնոյթը կը տփգուէր:

Ու երբէք իրարու ուրիշ քան չըսինք բացի այն աստիճաններուն ու սիրոյ խառնուրդէն զոր մեր աչքերը կարտայայտէին:

Ամբողջ տարի մը այսպէս իրարու հանդիպեցանք, այո՛, ամբողջ տարի մը, բարեկամս: Այն ժամանակ սասնորվեց տարեկան էի եւ ինք թերեւս քսան, ու երբէք մեր մէջ բառ մը չարտասանուեցաւ, ոչ ալ բարեւ մը փոխանակուեցաւ: Միայն մեր աչքերը նայուածքի գիտնով թեւէն կը յափրանային...:

Երբ այլեւս զիրար տեսնելէ դադարեցանք, ես տակաւին կը կարծէի թէ սէրն ու աստիճանները երկու իրարու հանգուեստից զգացումներ են:

Բարեկամուհիս լոնց, եւ իրիկունը գետակին կարկաչուէն ու հօտին բու-

ծոճիկներուն պանչիւնը կը լսուէր միայն:

Խնդրեցի իրմէ որ բնակարանս գայ, աւելցնելով որ հին բնակարանի մըն էի, եւ, այնքան յուզուած որքան ասեցիք Միւնիխի անգլիական պարտէզին դրան առջեւ, զիս անոր առջեւ կը գտնէի:

— Ինչպէ՞ս, հո՞ս կը գտնուիք, ըսի, չի կրնալով ուրիշ խօսք գտնել:

— Հոս եմ, պատասխանեց անհանգիստ կերպարանքով մը, երկշտոնայուածքով մը զիտաւու իմ Բեթերսպոլիկի աղամանդներս: Եւ իր մէջ նոյն մտատանջիկ երկշտոնութեան զգացումն էր, զոր ես իսկ զգացի գայն տեսնելով:

Ալ զիրար չէլինք սիրեր:

Սակայն, այն ասան իսկ, ամէն ինչ պատրաստ էի գոհելու մէկ վայրկեան մը Միւնիխի պարտէզին նստարաններուն վրայ գտնուելու համար, ամբողջ կեանքս՝ օր մը միայն անոր մօտենալու համար, անոր, իմ Փլորէնտացի Մուրր Գեյրգիս...:

Գետակը կը կարկաչէր հեղիկ: Ձիւնը տարօրինակ ցոլքերով լեռները կը պսակէր, անհոտ աշնանային վարդերը մեր աչքերուն առջեւ կը մեռնէին:

խարստները շրջապատած էին սեւ ծագիկներով զարդարուած դազազը . ամէն բան կատարեալ էր վերջապէս փառաւոր . յուզարկաւորութեան մը համար , բնութիւնն իսկ կը համաձայնէր Թոնի ընծայուած յարգանքներուն զեղեցիկ օգով մը , ձմեռուան մեղմ արեւով և պայծառ երկինքով , հանգամանքներ սրոնք համբարութիւն կը ներշնչէին մարդուն և ձանձրոյթը կը փարատէին :

Լուռ ու մունջ կանցնէին դեռ պաններ , մտաւոր երկիրներէ ու քաղաքներէ եկած մասնաւոր ներկայացուցիչներ , իրենց պատակներով , կղերներու , զօրքերու , ուսանողներու խումբեր մեծ ու փոքր պատկերով : Հայերն ալ իրենց ներկայացուցիչն ունէին և իրենց պակար որ ամենէն փոքրագոյն և հետևաբար աննշմարելի էր , 140 ֆրանքի արժողութեամբ :

Պատկերներն մէջ ամէնէն առաջին տեղը կը բռնէր շինական կայսեր և Անգլիոյ թագուհւոյն պատկերը :

Թափօրը որ առաջուան ժամը 10ին ճամբայ ելաւ , գերեզմանատուն հասաւ երեկոյեան ժամը 4 ին միայն :

Նորընտիր նախագահը ըսց կառքի մը մէջ նստած զօրավարի մը և երկու նախադարձներու հետ , կընթանար շրջապատուած հեծեալ զօրքերէ : Իրեն կը հետեւէին միւս նախադարձներն ու գեոպանները : Ճատ սակաւ թիւ բերաններէ միայն Լու պէ խլեց կեցցէներ , մինչդեռ իր անցած միջոցին , խեղդուած ինքններու մէջ , լսելի կը դառնար «անկցի՛ Լու պէ» աղաղակը :

Նոյն իրիկուն ամբողջ կրկին ցոյցեր պատրաստած էր , և այս անգամ աւելի սաստիկ . կը խօս-

ուէր որ զօրքերուն մէջ անգամ բաժանում մը առաջ եկած էր : Ոստիկանութիւնը խիստ մրջոցներ ձեռք առաւ սակայն և կըսուի որ նոր օրէնքով մը ասկէ ետքը փոշոցին մէջ պոռացողները պիտի ձերբակալուին :

Այսօր Բարիլի մայր եկեղեցւոյն զարդերը ցոյցի դրուած էին , բազմութիւնը ոտակալութեան հակողութեամբ կը մտնէր Նոթ-Տամի մէջ սպառք եկեղեցին զ/տելու :

Բարիլաբնակ հայ մը , որ գործածուած նամակաղբոջմ և արիչ հնեղէններ կը ծախէ , անցեալները կը գնէ արժուներու հետ զոյ արկը մը , և առանց ուշադրութիւն ընելու կամ բանալու քանի մը օր ետքը կը ծախէ : Յաճախողը գրամ չունենալով կը խնդրէ միասին սուսն երթալ կառքով , արժէքը վճարելու համար :

Ճամբան ապրանքները բեռնած կառքը ուրիշի մը կը բազխի և իրեղէնները վար կը թափին , ինչպէս նաեւ արկը , որ կը բացուի և մէջէն 50,000 ֆրանք արժող երկաթուղւոյ տոմսեր դուրս կ'իջնան : Իրեղէններ գնողն ու հայը կ'ուրի կը բռնուին և կը դիմեն դատաւորին : Կը կանչուի այն միջնորդը ուրկէ արկը գնուած էր : Եթէ բուն արկըն աէրը գտնեն տոմսեր անոր պիտի յանձնուին , հակառակ պարագային գնողը , ծախողն ու միջնորդը պիտի բաժնեն իրենց մէջ : Բայց տէրը պիտի գտնուի անշուշտ , քանի որ տեղական բոլոր լրացիրները հրատարակած են : Մեղի կը մնայ ըսել թէ բազմը մպտեր է Հայուն , բայց անկաքնած է եղեր :

ԽԵՅՕ

—)(—

Ու աչքերնիս հետուն , զէպի ձորը յառած , երկուքս ալ լսիկ վերադարձանք զղեակին հիւրերը գտնելու :

Բ.

Գղեակին պարսկական մեծ սրահին մէջ էինք . եւ Ապրիլի խնկամանին մէջ նկատու էր ուսական քաղցրաբոյր խոնկեր :

Կովկասէն նոր հասած էի , բուռ բարեկամու հետ , և զոն հաստնք յաւիտեան կան ձիւններու մէջէն անցնելով , մանուան սպանալիքը միշտ աչքերնուս առջիւ : Չիւնակոյտերու շարաշուք զէզեր յոճար մեր ծառայած ձիւններն ստիչու կիշնային դառնաղբոր :

Կովկասի իշխանապետները իրենց այժմ միջով վերադարձնելուն մէջ ամփոփուած , կը փութային նուազահանդէսին ներկայ գտնուելի : Գրան առջեւ սեղանին վրայ , 20 բուպի կը զետեղէին , ու իրենց զմայլանքը կը վկայէին իրենց կոչաւ ու ծանր գաւազաններով զեանը ձեռնելով :

Նուագահանդէսը վերջանալուն ինչ խնդրեցին հասեալ օրն ալ երգել , եւ ամբողջ սասն օր բուպիները

կրկին կը պարպուէին իրենց գրպաններէն ու ամէն իրիկուն ես պարտաւորուեցայ երգել Կովկասի իշխանապետներու համար :

Ան , հայ երիտասարդ մը քսան տարեկան , հպարտ ու վառ աչքերով անոնց մէջ տեղը կը կենար :

Երբ աչքը մարդոց վրայ կը յանդիպէր անքթիթ , իր նայուածքը երկտասարդ թագաւորի մը նայուածքն էր կարծես , բայց երբ աչքերը իմ վրաս կանց անուէին , քաղցր ու հեղ կը գտնային այժմամի մը պէս :

Երբ ասանկորդ երեկոյթը վերջացաւ , ան միայն խնդրեց նորէն երգիլ :

Կրկին Սիւնեոյա՛ , պաղատեցաւ , լսիկ ես գլխի պարզ շարժումով մը , ժխտական պատասխան մը տուի , ու բովհեաւ պէտք էր մեկնելի :

Երբ լսելիքս հասաւ , զոն գոնայ հայ իշխանապետը տխուր ու գոռնատա : Մոռցաւ . եւ , արագութեամբ պատեանէն զուրս քաշելով մերկ սուրբ , ծունդերուն վրայ երկու կտուր ըրաւ զայն :

Յետոյ ձիւններուն մէջ ծնրադիր , ուրբուս սակ զեանդեց չախախտուած սուրի կտորուանքները . . . Բարեկամուհին լսեց և . իր յոգ-

Ք Ր Ո Ն Ի Կ .

Ս. Հայրապետը որ Տփղիս գացած էր ազգային զանազան խնդիրներու , մանաւանդ հայ վարժարաններու գրաւման մասին գանդատներ ընելու և բանակցութեան սկսելու համար , բոլորովին անյաշող մնացեր է , Կառկասի կառավարիչը Բեգբերպուրի կանչուեր է , որով կուսակալին և կաթողիկոսին մէջ բանակցութիւնները անկարելի եղած են : Կըսուի թէ վարիչ Բեգբերպուրի միայն ես պիտի դարձնէ «օրինական սխալ բացատրութեամբ» գրուուած քանի մը կալուածներ : Սեղի բան չի յուսացուիր :

—Սմբրիկայի միսիոնար ասքթ. Ռէյխալտս վանէն գրած վերջին նամակին մէջ Ս. Պատրիարքին ուղղելալ , տեղոյն աղքատութեան սաստիկութիւնը կը յայտնէ , և նիւթական նուէրի հետ մէկտեղ կարող հովիւի մը պէտքը :

Խարբէրդէն լատին միսիոնար մը Բէն Ռաֆայէլ , նամակ գրելով պատրիարքարան , գիտնողութիւն ըրեր է բողոքական ասքթ. Պրօքսին հայ եկեղեցւոյն մէջ քարոզ խօսելուն դէմ : Կերեայ թէ յարգելի Բէնի Ղլղեղուն գպերէ ասքթ. Պրօքսի ցցուցած անկեղծ համակրութիւնը դէպի հայ եկեղեցին :

—Ամբրիկայի միսիոնարներուն Բալուի և Չնքուշի մէջ բացած Որբանոցները տեղային իշխանութեանց հրամանաւ փակուեր են : Ամբրիկեան դեսպաննուսը պէտք եղած գիտնումներն ըրեր է այս անիրաւ փակումն դէմ բողոքելով :

—Խառն ժողովը իր վերջին նստին մէջ վերջնականապէս մերժեր է Իլլիւրիանի առաջ-

նորդական ընտրութիւնը , և հըրահանգ զրկեր է Նգիպտոս նոր ընտրութեանց ձեռնարկելու : Եզիպտոսի ազգայինք քաջութիւն պիտի ունենա՞ն պնդելու իրենց առաջին ընտրութեան վրայ և պաշտօնապէս հրապարակելու մեր Պոլսոյ Պատրիարքին ու ժողովականներու ազգագաւ ընթացքը :

—Չարմանալի հեղուցիւն . Պոլսոյ ժողովականներն ալ , իրենց նիստերուն մէջ հանդիսաւորապէս կը պոռան , կը կանչեն , կը բողոքեն կրօնականներուն դէմ , որոնք իբր թէ խոյս կուտան եղեր առաջնորդական պաշտօնէ : Քաղաքական ժողովոյ աւանակետը Ստեփան փաշա Ասլանեան , զոռացեր բողոքեր է բարձրաստիճան եկեղեցականներուն բռնած ընթացքին դէմ :

Պոլսոյ վարչութեան այդ թրքացած ժողովականներ պէտք է գիտնան որ , ժողովուրդը չի խաբուիր իրենց պոռչափոքներէն : Ինչո՞ւ Իլլիւրիանը չեն ուղեր Եզիպտոս զրկել . հոն ալ Թուրքիա չէ որ ժողովուրդը յեղափոխէ : Ինչո՞ւ ահանջ չեն կախեր Ներսէս Եպս. Ասլանեանի առաջարկներուն վանի առաջնորդութեան համար : Իսկ այն կղերներ որոնք կը մերժեն մեկնիլ , արդէն իբր առաջնորդ նշանակելն յանցանք է , որովհետեւ եթէ մեկնին ալ չեն կրնար ուէ օգտակարութիւն մը ունենալ Հայաստանի բազմապահանջ թիմերուն :

—Պրանտական նախարարութիւնը Պատուոյ Լէգէոնի հրամանատարութեան աւսիճան շնորհած է Բ. Գրան օրէնսդէտ խորհրդական Պարթէլ Նորատունկեանի , և սպայութեան աստիճանը հանրօգուտ շինութեանց նախարարութեան մասնազէտ

նած ձեռքով . պարսկական սրահին մէջ ինծի ցցուց այս չախախտած սիրոյ խորհրդանշանը :

Գ.

Իր աշխատութեան սենեկին մէջ , վանահօր չուրջը — միակ գաշնակահար ուսուցիչը որ կը ննջէր մեղմիւ , հաւաքուած էին Ռիպիլեճքալի համալսար երաժիշտին ժառանգները . Մարիա Ռիլիթ , բրիժա տօնան , սանտիկինը , ուս իշխանուհին և Ան , Պալիկոյի թագաւորին սիրելի բարեկամը :

Ամէնքն ալ , ցած ձայնով , կը խօսէին երջանկութեան ու փառքի վրայ : Նորմանտական զղեակներ կերակրէին , կը գովէին Ամբրիկայի պիտքն ու ճոխ հարստութիւնները . Աւսարալիայի ճամբորդութիւններն , ուր տեղոյն լուսին տակ աշխարհի ամենէն հիասքանչ զիշերները կը ըլլան . Կովկասը վերջապէս , ուր կիներու շէրթունքները մոթ նուազոյն երանց մը ունին :

Մարիա Ռիլիթ յայտնեց իր բնածայած նախապատուութիւնը զղեակի կեանքին : Պալիկոյի թագաւորին

բարեկամը , երկարօրէն պարզեց մենաստաններուն միասիքական հրապոյրը եւ վատիկանի մէջ մատուցուած պաշտօններուն վեհափառ շքեղութիւնը :

Յանկարծ վանահայրը արիւնցաւ և , տանախրուհին , սաստիկութեամբ , քիչ մը ջղային խնդումով զայն հարցաքննեց :

—Տէր , բացատրեցէք մեզի կեանքի մէջ ու՞ր կը հանդիպինք երջանկութեան :

—Երջանկութիւն , պատասխանեց վանահայրը , հորիզոնը քննելով , իբրիւ թէ այս բառը իր աչքին տուեալ հազար ու մէկ գերբնական յայտնութիւններ բերած ըլլար : Ու այն ատեն , ժպիտ մը լուսաւորելով այս զէմքը որուն ազգութիւնը մարդկային երկեակ տարիքներու հանճարը կը ցուցնէր , ըսաւ .

—Երջանկութիւնը , երիտասարդ ըլլալն ու սիրելն է . . .

Բայց այս բառերուն վրայ սասն լուսութիւն մը ամբողջ սրահը լեցուց :

ՀԵՐՄԱՆ, ՊԱՆ (քարգ. Գաւիկեհեհ)

—)(—

խորհրդական Սէրիլչէնի Գոլոյ ֆրանսական զեպանը անձամբ յանձնել է շքանշանները :

—Տիգրիսի մէջ կը կարգանք Տօքթ. Տատրեանի հինգ տարի առաջ բացած դատին մանրամասնութիւնները : Տօքթ. Տատրեան առաջին անգամ Ամերիկայի մէջ մածուն պատրաստող և ծախողն էր հայկական մածուն անունով : Ուրիշ հայ բժիշկներ ալ հետեւելով Տօքթ. Տատրեանին, սկսած էին մածուն պատրաստել ու ծախել : Բայց տօքթ. Տատրեանի ազատութիւնը բռնեց, և իբրև նախաձեռնարկ՝ դատ բացաւ միւսներուն դէմ, պահանջելով որ արգելուի ուրիշ անձի մածուն ծախելը նոյն հայկական անունով :

Ամբողջ հինգ տարի զործը դատարանէ դատարան կը ձգձգուի, մօտ 50,000 տօլար կը ծախուի, և վերջապէս կը վճռուի որ տօքթ. Տատրեան իրաւունք չունէր իւրացնելու այդ բառը, քանի որ հայ ժողովրդին կը վերաբերէր ան : Տօքթ. Տատրեան կը ստիպուի փոխել մածունը և «Չուլաք» անուանել զայն, բայց 50,000 ֆր. ծախսելէ ետք : Եթէ հայկական բոլոր բառերը այսքան սուղ արժէին, իրաւ որ ամէն հայ մէյմէկ միլիոնատէր կը դառնար :

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ**

Պ Ո Ւ Լ Կ Ս Ր Ի Ա

Պուլկարիոյ սպայակոյտին անգամ հաղարապետ Բէթքով և Տօք. Չակարով ամսոյս 12ին Կ. Պոլիս մեկնեցան : Ասոնք պուլկար կառավարութեան կողմէ պատուիրակ կարգուած են Օսմ. կառավարութեան հետ պայմանագիր մը կնքելու, Պուլկարիոյ Արեւելեան Ռումէլիի և Թուրքիոյ եւրոպական նահանգներուն միջեւ սահմանազրկութեան հսկողութեան նկատմամբ :

—Նայէ Փրայէ Բրէսէ Վիէննական լրագիրը, խօսելով Պուլկարիոյ ելեւմտութիւն վրայ կրօն թէ, նոր նախարարութիւնը մեկգի ձգած է Արեւելեան երկաթուղիներու գնման, ինչպէս նաեւ զուգահեռական գծի մը շինութեան ծրագիրը, որ երկրին ներկայ տագնապին մէջ, լուրջ դժուարութեանց կը հանդիպի : Իսկ Արեւելեան երկաթուղեաց ընկերութիւնն ալ, իր կողմէն ուշադրութեան պիտի առնէ կառավարութեան զանգատները և կարեւոր զիջումներ պիտի ընէ : Սուտի, պուլկար կառավարութիւնը թողլով 300 միլիոն ֆր. փոխառութեան մը ընդարձակ ծրագիրը, իր ստիպողական պետքերն հոգալու համար, որոնց գումարը 40—50 միլիոն ֆր. կը հասնի, Վիէննայի մէջ նոր փոխառութիւն մը կնքելու հետաւում է :

—Վաւանայի նահանգապետ անուանուեցաւ Տ. Թ. Բէէֆ որ նոյն պաշտօնը վարած էր արդէն Սթամպուլօֆի օրով, և որ Պուլկարիոյ ազատութեան համար կռուողներուն պետերէն էր :

—Այս միջոցին Պուլկարիոյ ամէն կողմերը ինֆլուէնձաի համաճարակ մը տարածուած է, որ բնակչութեան բաւական նեղութիւն կը պատճառէ : Օղերն ալ շատ անկանոն և վատառողջ են և միանգամայն փոփոխական : Քանի մը օրուան սաստիկ ցորտէ մը ետք, որ մերթ ընկերացած էր թեթեւ ձիւնի մը, հրեկուրէ սկսեալ հարաւային տաք քամին սկսաւ փչել : Չգուշութիւն թող ընէ, ով որ չուզեր հիւանդ լուլ :

Կառավարութիւնը մտադիր է բոլոր վարժարանները փակել, եթէ համաճարակը շարունակէ :

**Թ Ո Ւ Ի Ք Ի Ա**

Անգլիական կառավարութիւնը սատկապէս բողոքեր է Բ. Գրան Կ. Պոլսոյ և Քէօսթէնձէի միջեւ հեռագրական գծի մը շինութեան արտօնութիւնը գերման ընկերութեան մը շնորհած ըլլալուն համար : Այս բողոքները հիմնուած են Եթէթէն-Թէլէկրաֆ հեռագրական ընկերութեան և օսմ. կառավարութեան միջեւ կնքուած պայմանագրին 13րդ յօդուածին վրայ : Խնդիրը նախարարաց ժողովին մէջ նկատի պիտի առնուի :

—Կ. Պոլսէն «Կազէթ տը Թրանք Փուր»-ի քաջուած հեռագիր մը կիմացնէ թէ 50 պահեստի զօրաց վաշտեր Մակեդոնիա զրկուելու համար ճամբայ ելած են : Տիպրէէն 41 վիրաւորեալ զինուորներ Պոլիս փոխադրուած են : Կըսուի թէ մահմեդական ալպանացիներու և կանոնաւոր զօրքերու միջեւ ընդհարում մը տեղի ունեցեր է :

—Սուլթանը հրամայել է որ Մակեդոնիոյ ամբողջ քրիստոնեայ բնակչութիւնը, Պուլկար, Յոյն, Սերպ և այլն, զինաթափ ըլլուին, և իրենց քահանաներն ու ուսուցիչները ամենախիտ հսկողութեանց ենթարկուին, որպէս զի կարելի եղածին չափ առաջին առնուի յառաջիկայ զարնան պատահելիք ապստամբութեանց :

Ասոր հակառակ թուրք ամբողջ ոգեւորեալ պատրաստութիւններ կը տեսնէ ու կը սպառազինուի : —Պոլսոյ պուլկարական զործակաւոր Մարքօֆ, Բ. Գուռ երթալով, իր կառավարութեան կողմէ վստահացուցեր է որ իշխանապետութիւնը պիտի շարունակէ իր քաղաքականութիւնը օսմ. պետութեան հանդէպ և պիտի աշխատի կարելի եղածին չափ հանդարտեցնել Մալեգոնական յուշումները :

—Ճիտաբէր մէջ ժանտախտի տարածումը պաշտօնապէս յայ-

տարարուել է Գէպի մարգարէին քաղաքը ուխտագնացութիւնը գեռ չէ սկսած : Կը վախցուի որ ձեռք առնուած միջոցները անբաւական ըլլան համաճարակին տարածումը արգելելու համար : Երկրին ամէն կողմը նմանօրինակ կասկածելի հիւանդութեան դէպքեր երեւան եկած են, բայց բժշկական մարմիններու պակասութեան պատճառաւ, չի գիտցուիր թէ ի՞նչ ընելու է աղէտքին առաջին առնելու համար :

Աղեքսանդրիոյ մէջ առ այժմ 15 օրուան քարանձինա մը հաստատուած է :

**ՓԻԼԻՊՊԵՆՆ ԿՂՁԻՔ**

Սպանիոյ պատերազմական նախարարը երկար հեռագիր մը ստացած է Մանիլա գտնուող հրամանատար Ռիօէն, որուն մանրամասնութեանց վրայ մամուլին տեղեկութիւններ տալ կը մերժէ : «Էմբրախիլ» թերթը սակայն Մանիլայի կազմութեան մասին մէկ քանի տեղեկութիւններ կուտայ : Ամերիկացուց և տեղացիներուն միջեւ կռիւր կը շարունակուի : Այս վերջիններուն ցոյց տուած սոկունութիւնը և քաջութիւնը Ամերիկացուց մեծ մտահոգութիւն կը պատճառէ : Այս ընթացքով դեռ շատ երկար ու կատաղի կռիւններ պիտի մղուին :

Նոյն իսկ Մանիլայի ներսերը ապստամբները տրամագրելի ուժեր ունին : Ժողովրդին մէջ մեծ իրարանցում կը տիրէ : Օտար հպատակներուն կեանքն ալ վտանգի մէջ է : Օտար տէրութեանց նաւատորմիչներուն հրամանատարները մտադիր են ցամաք զօրք հանել, իրենց հպատակները պաշտպանելու համար : Ամերիկացիք մօտ 60,000 զինուոր ունին Մանիլայի շուրջը, բայց հիւանդութիւնները ամենաքիչ ժամանակի մէջ, անոնց թիւը զգալապէս կը նուազեցնեն : Ժէնէրալ Ռիօ կիմացնէ թէ ամբողջ Մանիլան պաշարուած է : Սպանիացուց կղզւոյն մէջ մնալը հետզհետէ կը դժուարանայ ապստամբներուն դէպի քաղաք յառաջխաղաղացութեամբ :

—Նոյն քաղաքէն 28 փետր. թուականով եկած ուրիշ հեռագիր մը կրօն թէ Ամերիկացիք չորեքշաբթի իրիկուն կրակ ըրած են երկու անգլիացիներու վրայ, որոնք իրենց պատու հանին առջեւ հրդեհը գիտելու ելած էին : Ամերիկացիք զանոնք ապստամբներ կարծեք են, մին մահացու և միւսը թեթեւ կերպով վիրաւորուել են :

**ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ**

Իեթերուպուրկի մէջ վերջին անգամ համալսարանի հիմնուելուն տարեդարձին առթիւ ուսանողներու և ոստիկանութեան միջեւ կռիւ ծագեր է : Ուսանողները ուզեր են Չարին ձեռնուան պա-

լատին առջեւ ցոյց ընել, ոստիկանութիւնը ուզեր է արգելել և ուսանողներէն շատերը ձերբակալուել են :

—Իտալական կառավարութիւնը վերջնականապէս յայտնել է տէրութեանց որ, եթէ Պապը զենքեկեցութեան գեպանախորհուրդին պատուիրակ զրկէ, Իտալական կառավարութիւնը չի պիտի մանակցի :

Անգլ. կառավարութիւնն ալ Իտալիոյ ընթացքին հետեւելով չուզեր զենքեկեցութեան մասնակցել :

—Կովկասի գողերը իրենց արուեստին մէջ այնքան յառաջացած են որ, մինչև անգամ ստիկանաւորները կը յաղդին կողոպտել : Անցեալները, Թիֆլիզի ստիկանատանէն 250 լալ. գողցուել է : Ստիկանապետը խիստ հսկողութեան մը ենթարկել է պաշտօնատունը և յաջողութեամբ կողոպտել գողը որ ստորին պաշտօնեայ մըն է եղեր :

—Կազէթ տը Գրոնշթաւո կը գրէ թէ Չարին Հապէշիստանի թագաւորին նուիրած թնդանօթները իր մայրաքաղաքին ամբողջ մասը համար, յառաջիկայ օգոստոսին մէջ ճամբայ պիտի հանուին Ճիպոթի զրկուելու համար :

—Ռուսիոյ կիները շնորհակալութեան ուղերձ մը պիտի մատուցանեն Չարին զէնքեկեցութեան գեպանախորհուրդի մը գումարման նախաձեռնարկ ըլլալուն համար :

—Յոյն նշանաւոր բարերար հարուստ մը, Սինկրոս, մեռեր է Աթէնքի մէջ կաթուածահար : Սինկրոսի շնորհիւ Աթէնքի մէջ բազմաթիւ բարիգործական հաստատութիւններ կառուցուած էին : Իր մահը անդարմանելի կորուստ մը եղաւ Յունաստանի թշուառներուն համար :

**Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ**

Կարիճ, Աղեքսանդրիա. — Չեր զրկած թղթակցութիւնը նուազար փաշայի յուզարկաւորութեան մասին չենք ստացած :

**ՍԻՆԱՐԻ ԹՈՒՂԹ**

Տիար Տիգրան Տուժանեան կը ծանուցանէ թէ ի ֆ. Պոլիս Բուրչուճիանի զիմաց, կը վաճառէ Ազգ. Հիւանդանոցի ամենէն ընտիր նոր տեսակ սիկարի թուղթէն, զիպեալ զինքով մեծաքանակ եւ փոքրաքանակ : Բարեգործութիւնը եւ շահը կը պահանջեն որ ամէն հայ գործածէ զայն : Կան նաեւ Պօն, Վոլթօ եւ ուրիշ ամէն տեսակ թուղթեր : Յանձնարարութիւնք կը կատարուին ճշտաիւ եւ փութով :